

րը՝ իրագործելու հասարակաց մշակոյթ մը եւ պիտի խորտակուին մեր քաղաքական ոյժերը: (Ստորագծումը մերն է): Եթէ մենք ստանանք թերթիթօրեալ ինքնավարութիւններ, այն ատեն երկիր չունեցող մահմետականները կորած են: Միայն մէկ միջոց կայ պաշտպանելու մահմետականութեան ազգային շահերը. մենք պէտք է ձգտինք ձեռք բերել կուլտուրական ինքնավարութիւն Ռուսաստանի բոլոր մահմետականներուն համար: Այնտեղ Նահանգներ ու շրջաններ նկատի պիտի չառնուին, այլ անհատանձերու ազգային գիտակցութիւնը միայն»:

«Ու հիմա՝ հարց կը բարձրանայ՝ հապա «մահմետական ազգութիւն» կա՞ջ: Առանձին ազգութիւն մը ըլլալու համար, ժողովուրդ մը պէտք է ունենայ որոշ յատկանիշներ, որ զինք կը տարբորեն միւս ժողովուրդներէն: Մահմետական ազգը Արեւմուտքի բոլոր ժողովուրդներէն կը զանազանուի իր կրօնով, այնպէս որ «իսլամ» բառը կը պարունակէ իր մէջ առանձին ազգի մը գաղափարը»:

«1907ին ազգային-ընկերվարական կուսակցութիւններու համագումարին մէջ մանրամասն գեկուցում մը կարգացուցաւ այս հարցին վրայ: Այս գեկուցման մէջ հաստատուեցաւ, որ ամէն ինքնավարութեան հիմնական պայմանը ոչ թէ հողը կամ երկիրն է, այլ ազգութիւնը»:

Ուրեմն Յալիկովի նպատակն է Ռուսաստանի բոլոր մահմետական ժողովուրդները իբրեւ մէկ ազգ կազմակերպել արտերկրային կուլտուրական ինքնավար միութեան մը մէջ:

Թէ ի՞նչ քաղաքական օրգաններ պէտք է ունենայ այս ազգային ինքնավարութիւնը, Յալիկով, կոթնելով Աւստրիացի գիտնական Շփրինգէրի հեղինակութեան վրայ՝ կ'ըսէ—Ա. Ազգային հարիւրդ մը, Բ. Ազգային Նախարարութիւն եւ Գ. Ազգային իրաւունքի պաշտպանութեան համար հաստատութիւններ (իմա՛րանակ):

Ի՞նչ է այս եթէ ոչ ազատ եւ միացեալ թուրանիա իր խորհրդարանով, կառավարութեամբ եւ բանակով, միայն թէ՛ իբրեւ թէ, ո՛չ-անկախ Ռուսաստանէն:

Այսպիսի գաղափարներու եւ բաղձանքներու արտայայտութենէն ետք՝ ալ ի՞նչ նշանա-

կութիւն կրնայ ունենալ Յալիկովի սոցիալ-դեմոկրատական վերջաբանը.—

«Ահա ինչու ես այն տեսակէտէն եմ, թէ Ռուսաստանի համար իբր պետական վարչաձեւ միայն ու միայն կեդրոնացեալ կառավարութեան մասին կրնայ հարց ըլլալ. միայն այն ատեն է որ տարբեր ազգութիւնները, եւ անոնց կարգին մահմետականութիւնը, կ'ապահովեն իրենց ինքնավարութիւնը: Ես կը խնդրեմ յանուն Ասիոյ մեծ մշակոյթի վերածնունդին, յանուն բոլոր մահմետականներու ազատազրութեան եւրոպական բուրժուազայի լուծէն, մէկդի ձգել զաշխակցութեան գաղափարը»:

* * *

Այժմ տեսնենք Բասուլզադէի փարս:

Տեսական յառաջաբանէ մը վերջ, ուր կը խօսի մարդկային քաղաքակրթութեան եւ ազգային մշակոյթի փոխ-յարաբերութեան, աշխարհի ապագայ մեծ սոցիալականացման, ազգերու ինքնորոշման իրաւունքին եւ ապակեդրոնական վարչաձեւի առաւելութիւններուն վրայ՝ Բասուլզադէ կ'անցնի իր բուն նիւթին՝ «ձգենք այս հարցը եւ տեսնենք, թէ մահմետականներու տեսակէտէն ո՞րն է լաւագոյն վարչաձեւը Ռուսաստանի համար»:

Ռուսաստանի տարածութիւնը եւ տարացեղ ու տարակրօն բազմամիլիոն բնակչութիւնը ունեցող կայսրութիւն մը, կ'ըսէ Բասուլզադէ, անպայման պէտք է կառավարուի ժողովուրդներու հասարակապետութեան մը միջոցով: Ան ապակեդրոնական պետութիւնը կը պատկերացնէ իբրեւ դաշնակցութիւն մը բաղկացած՝ շատ մը ինքնավար շրջաններէ բաժնուած ըստ ազգութիւններու: «Ռուսաստան իրեն համար տուն մը պէտք է չինէ, ուր իւրաքանչիւր ազգ սենեակ մ'ունենայ»:

Ինչպէս Յալիկով, Բասուլզադէ ալ հարց կը դնէ. «Ի՞նչ է ազգ մը», բայց Յալիկովին բոլորովին հակառակ պատասխան մը կուտայ, որ է—

«Իմ կարծիքով ազգի ցայտուն յատկանիշերն են ընդհանուր լեզուն, պատմութիւնը, բարքերն ու սովորութիւնները: Կ'ըսեն, թէ Իսլամն ալ ազգ մըն է, եւ երբ մէկը Թրքոթաթարին կը հարցնէ՝ «Ի՞նչ ազգի կը պատկանի», պատասխան կը ստանայ՝ «Ես մահմետ-